ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մրգավետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի << Հայոց պատմություն>> (6 դասաժամ), <<Համաշխարհային պատմություն>> (3 դասաժամ), <<Հասարակագիտություն>> (3 դասաժամ), <<Հայրենագիտություն>> (1 դասաժամ), <<Ֆիզկուլտուրա>> (16 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձեւ 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

անձը հաստատող փաստաթուղթ,

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձեւ 5),

այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2023թվականի հունվարի 11-ից հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 26-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 08-25-15 հեռախոսահամարով: